

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1909—1910

ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆ ՏԵՐՈՒՅՑ


ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՑՈՎՆԱՆԵԱՆ

ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

ԹԻՖԼԻՍ

ԿՈՒՂԱԾՈՒՐԱ» Բարօնակայա փողոց № 14.

1911.



ՄԱՐԻՍՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՅՏ

ՀՈԴ-ԸԲԸՐՑԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1909 ՄԵՊՏ. — 1909 ԴԵԿՏ. 1-Ը.

4/705/3

Փոխ-նախագահ տիկ. Դ. ԹԱՂԻՔՈՒԵԱՆ

Անդամներ	U. ՇԽԵԱՆ
	U. ՄՈՒՋԱՑԵԱՆ
Տեսուչ	8. ԴԱՇՄԱԺԵԱՆ

Ժանօվ. — ԹէԿ Հոգաբարձական Խորհրդի նախագահ համակալ է թեմակալ սրբազն առաջնորդ Գ. արքեպ. Սարունեանը, իսկ անդամներ եղել են նաև կուսանաց անապատի մայրապետ Յեփլոսինէ Արամելիքեան և պ. Լ. Նազարեան, բայց Հոգաբարձութիւնը գործել է միայն վերոյիշեալ երեք անձանց կազմով:

1909 ԴԵԿ. 1-ԻՑ ԵՊԵԼ Է ՀԵՏԵՒԵԱՆ ԿԱԶՄԸ.

Նախագահ Գ. արքեպ. ՍԱԹՈՒԵԱՆ

Անդամներ	Մայրպտ. Յ. ԱԲԱՄԵԼԻՔԵԱՆ
	Ն. ԱՆԱՆԵԱՆ
Տեսուչ	ԲԺՇԿՊՏ. Բ. ՆԱՀԱՍԱՐԴԵԱՆ
	Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
	Մ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆ
	Մ. ՄԵԼԻՔԵԱՆ
	Տ. ԴԱՇՄԱԺԵԱՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՅՈՒՆԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՅՈՒՆԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՐԱ ՅԱՎԱՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ  
ՀԱՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ  
Հ-Ի ՀՐԴՔ ՅՈՒ- ՀՊԴԱ ՅՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ ՀԱՅ- ԽՈԲԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ ՀԱՅ- ԽՈԲԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ ՀԱՅ- ԽՈԲԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ ՀԱՅ- ԽՈԲԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ ՀԱՅ- ԽՈԲԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ ՀԱՅ- ԽՈԲԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ ՀԱՅ- ԽՈԲԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ ՀԱՅ- ԽՈԲԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱ ՅՈՒ ՀՅՈՒՆԱԳՐԻ ՀԱՅ- ԽՈԲԸ

5424

ՀԱՅՈՒԹԵՐԸ ԱԿԱ ՊԱՇԱ ԲԻՋԱՐԱԳ ՅԱՅՑՔՐԴՅԱ  
ՀԱՅՈՒԹԵՐԸ Ա ԽԱՅՑՔՐԴՅԱ ԲԻՋԱԳ Ա ԽԱՅՑԱՍ  
ՀԱՅՈՒԹԵՐԸ ԲԻՋ ԽԱՅՑԱՆԵՐ ՖԻՐՈՒ ԷՎԱ ՀԱՅՑ  
ՀԱՅՈՒԹԵՐԸ ՄԱԿԱՐԱՆ Հ Ճ ԽԱՅՑԱՆ ԽԱՅՑ ԳԼԱՄԵ  
ԳԼՈՒՅ ԿԱՐԴՈՒՅ ԸԱՅԱՆՅԻՆ ԸԱՅԱԿԱԴՅԱՍ Ա ԸԱՅԱ

ՀՈԴԵՐԵՐՉՈՒԹԵԸՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ 1909-1910 ԹՈՒԻ ԻՐ

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԸՆ ՄԸՍԻՆ

Թէև նախորդ Հոգաբարձութեան պաշտօնավարութեան  
ժամանակամիջոցը լրացել էր 1909 թ. ապրիլին, բայց  
նոր Հոգաբարձութեան ընտրութիւնը և հաստատութիւնը  
բաւական ուշացաւ զանազան և գլխաւորապէս Հայրապե-  
տական գահի թափոր լինելու պատճառներով. այնպէս որ  
1909-1910 ուս. տարուայ սկզբին պաշտօնավարում էր  
ոչ թէ նոր Հոգաբարձութիւնը, այլ նախորդ Հոգաբարձու-  
թիւնը:

Նոր Հոգաբարձութեան հաստատութիւնը, Հայրապե-  
տական կոնդակով, տեղի ունեցաւ 1909 թ. նոյեմբերի  
6-ին, իսկ փաստորէն նա ստանձնեց իր պաշտօնը միայն  
գեկտեմբերի 1-ին. Առաջ ենք բերում Հայրապետական  
կոնդակը.

ՄԱՏԹԵՈՍ ՇԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-  
ՍԱՆԵԼԻ ԿԱՄՈՔԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱ-  
ԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՄՔ  
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԿՆ Ա-  
ՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷԶ-  
ՄԻԱԾՆԻ. ԳԵՐԱԶՆՈՐՀ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՎՐԱ-  
ՍԱՆԻ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ  
ԱԹՈՌՈՅ ՆՈՒԻՐԵՄՔ ՈՂՋՈՅՆ ՀԱՆԴԵՐՉ ՀԱՅՐԱՊԵՏԱ-  
ԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄՔ.

Ընկալեալ Մեր ընդ յայտաբարութեան Զերում  
յ 31 անցելոյ հոկտեմբերի թ. 1367, զարձանագրու-  
թիւն ժողովոյ երկոտասան պատուիրակաց երից

Եկեղեցեաց քաղաքիդ՝ Վանաց աւագ Եկեղեցւոյ,  
Մողնւոյ ս. Գէորգ Եկեղեցւոյ և Բէղդէհէմի, հասու  
եղաք, Եթէ ժողով՝ գումարեալ ընդ նախագահու-  
թեամբ Զերով, ընտրեալ է ի պաշտօն Հոգաբարձու-  
թեան Մարիամեան-Յովինանեան օրիորդաց դպրոցի  
հայոց Տիմեաց քաղաքի զպարոնայս՝ բժշկապետ  
Բագրատն Նաւասարդեան, Համբաձումն Առաքելեան,  
Սարգիսն Մելքումեան և Մովսէսն Մելիքեան։ Արդ՝  
ըստ ընտրութեան և միջնորդութեան գերաշնորհու-  
թեան Զերում այսու կոնդակաւ Մերով հաստատեմք  
զյիշատակեալ նորոգ ընտրեալ պարոնայս ի պաշտա-  
ման Հոգաբարձութեան Մարիամեան-Յովինանեան  
դպրոցի եռամեայ ժամանակաւ՝ ցվախճան ապրիլ  
ամսոյ 1912 ամի, յուսալով, զի բարեպաշտօն ան-  
դամք Հոգաբարձութեանդ քաջ ըմբռնելով զպահանջ  
ժամանակիս՝ ոչ անխայեցեն ի ջանս բոլորանուէր  
ոգւով և սրտեռանդն գործունէութեամբ գուն գործել  
վասն բարգաւաճման և յաւաշաղիմութեան կրթա-  
կան հաստատութեան մատաղերամ դստերց ս. Եկե-  
ղեցւոյս։ Զոյգ ընդ սմին յայտնեմք զլիաշուրթն գո-  
հունակութիւն Մեր հանդերձ հայրական օրհնութեամբ  
նախկին անդամոց Հոգաբարձութեան Մարիամեան-  
Յովինանեան օրիորդաց դպրոցի, որոց բարձեալ զծան-  
րութիւն պաշտամանն և զինամս դպրոցին, հոլովեցին  
զեռամեայ շրջան պաշտաման Հոգաբարձութեանն  
խղճի մտօք և ամենայն անձնութրութեամբ։ Ողջ  
լեռուք զօրացեալի Տէր և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։  
Մատթէոս Բ. Կաթուղիկոս Ամենայն Հայոց։

6-ն նոյեմբերի 1909 ամի

և ըստ Տոմարիս ԱՅԾԹ

ի Հայրապետութեան Մերում Ա. ամի

յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի.

ի Վաղարշապատ

թ. 381.

Նոր Հոգաբարձութիւնն անկարող էր, ուստան կանոնաւոր ընթացքը չխանգարելու համար, որևէ փոփոխութիւն կամ լրացում անել թէ նախահաշուի և թէ առհասարակ դպրոցի կեանքի մէջ, որովհետև այդ տարուայ համար արդէն կազմուած էր նախահաշիւ և գորածադրվում էր. այլ բաւականացաւ միայն ի մօտոյ ծանօթանալով դըպրոցի տնտեսական գրութեան և կարիքների հետ՝ իր պագայ գործունէութիւնն ըստ այնմ ղեկավարելու համար:

Այդ ուսումնական տարուայ ընթացքում դպրոցի ուսուցչական մարմինը մնաց նոյնը, ինչ որ կազմուել էր նախորդ Հոգաբարձութեան օրով: 1909 թ. նոյեմբերի 29-ին դպրոցում տեղի ունեցաւ ակտ, ներկայութեամբ հին և նոր Հոգաբարձական կազմերի, որի ժամանակ նախորդ Հոգաբարձութիւնը ներկայացրեց իր տեղեկագիրը 1908-1909 ուս. տ. համար:

Մտնելով իր պաշտօնի մէջ 1909 թ. գեկտ. 1-ին՝ այդ օրը կայացած նիստում երկու կազմերի մասնակցութեամբ կազմուեց մի մասնաժողով դպրոցի ամբողջ գոյքը յանձնելու և ստանալու համար: Հոգաբարձութիւնն ստացաւ նախորդ կազմից կանխիկ դրամ ընդամենը արժէ-թղթերով՝ 90,000 ր. նոմինալ արժողութեամբ  $4^0/_0$  պետ. ըենտա, Քաղաքային Վարկի Ընկերութեան երեք հատ 1000-ական ըուբլանոց  $5^0/_0$  օբլիգացիա, իւրաքանչիւրը 18 կուպանով, Թիֆլիզի Առևտու. Բանկի ընթացիկ հաշուի № 3228 գրքոյկով 697 ր. 82 կոպ. նաև դպրոցի անշարժ ու շարժական կայքը՝ ցուցակներով:

Բացի դրանցից նախկին Հոգաբարձութիւնը ցոյց տուեց ստանալիքներ զանազան անձերից 8132 ր. (ուստան թոշակից 1721 ր. 50 կ., կրպակականերից 2315 ր. 72 կ., զանազան մարդկանցից 4093 ր. 79 կ.) և վճարելի պարտքեր 1552 ր. 59 կ. (զանազան անձանց 552 ր. 59 կոպ., պետական և հողային տուբլի 1000 ըուբլի). միենոյն ժամանակ յայտնուեց, որ դպրոցի ունեցած 25,000 ըուբլի

գումարից նախորդ Հոգաբարձութիւնը ստիպուած է եղել երեք տարուայ ընթացքում ծախսել 22,000 ըուբ-լի, այն պատճառներով, որ նա վերածել է դպրոցը միջնակարգի՝ բանալով ե, Զ և է դասարաններ. այլ և կատարել է մի քանի վերանորոգութիւններ դպրոցի շինութեան և քարվանսարայի մէջ:

Ստանալով դպրոցն ամբողջովին և նրա անշարժ ու շարժական գոյքը իր խնամակալութեան ներքոյ՝ ներկայ Հոգաբարձութիւնն ամենից առաջ լրացրեց իր կազմը, որ պահանջվում էր դպրոցի հիմնադրի կտակով, հրաւիրելով իրեւ պատուաւոր հոգաբարձու Յովիսաննեան տոհմի արական սեռի աւագագոյն ներկայացուցիչ պ. Նիկողայոս Յովսէ-փեան Յովիսաննեանցին, հիմնադրի եղածոր որդուն, ինչպէս և սրբազն առաջնորդին և մայրապետին, որոնք նախորդ Հոգաբարձութան օրով դադարել էին նիստերին յաճախելուց:

Ապա Հոգաբարձութիւնն ընտրեց իր միջից փոխ-նախա-դահ (պ. Ս. Մելքոնմեանին) մի տարի ժամանակով, ըստ պահանջի կտակի, և գանձապահ (պ. Մովսէս Մելիքեանին):

Հոգաբարձութեան առաջին գործն եղաւ աշխատել աւելացնել դպրոցի եկամուտները, որպէսզի կարելի լինի հաւասարակշռել ել և մուտքը: Ամենից առաջ նա քննեց քարվանսարայի կրպակների վարձի յաւելման հարցը և ընտրեց մի մասնաժողով (պ. պ. Ն. Մնանեան և Հ. Առա-քելեան), որին և յանձնեց հաւաքել հարկաւոր տեղեկու-թիւններ և ներկայացնել զեկուցագիր՝ թէ վարձագինը որքան տոկոսով կարելի է բարձրացնել: Այս խնդիրը լուծումն ստացաւ նրանով, որ 1910 թ. յունուարի 19-ին կայացած նիստում Հոգաբարձութիւնն որոշեց աւելացնել քարվանսարայի ընդհանուր կրպակավարձը տարեկան 5277 լ. 61 կ., այսինք մինչև այդ ժամանակ ստացուող 20,194 լ. 39 կ. փոխարէն ստանալ 25,472 ըուբլի: Այս հարցում Հո-գաբարձութեան աջակցութիւն ցոյց տուին իրանք վար-ձականները: Նոր սակագինն սկսուեց գործադրուել 1910 թ. ապրիլի 1-ից:

Հոգաբարձութեան երկրորդ հոգմն եղաւ դպրոցի ներքին կանոնադրութեան խնդիրը։ Հոգաբարձութիւնը նկատեց, որ Մարիամեան-Յովանեան դպրոցը չունի մի մշակած և հաստատած ներքին կանոնադրութիւն։ և դա դըպրոցական ներքին կեանքում այնպիսի մի բաց է, որից կարող է վնասուել հոգաբարձական և ուսուցչական մարմինների համերաշխ և բեղմնաւոր գործունէութիւնը, որովհետև չկայ մի կանոնադրութիւն, որ ցոյց տայ թէ որտեղ է սկսվում և վերջանում հոգաբարձական և ուսուցչական մարմինների իրաւասութիւնները։ Այս հարցը եղաւ քննութեան առարկայ մի քանի նիստերի ու խորհըրդածութիւնների մէջ և որոշուեց՝ կազմելներքին կանոնադրութեան ծրագիր, համաձայն կտակի ոգու եւ ուղղութեան և առաջարկել ամենայն Հայոց Կաթողիկոսին ի հաստատութիւն։

Հոգաբարձութիւնն ուշադրութեան առաւ նաև այն հանգամանքը, որ դպրոցը չունի նաև վերջնականապէս մշակած և հաստատած ուսումնական մասի ծրագիր։ Եւ ի նկատի ունենալով, որ ուսուցչական խումբն արդէն ձեռնարկել էր, նախորդ Հոգաբարձութեան յանձնարարութեամբ, մշակել ուսումնական մասի մանրամասն ծրագիրը՝ յանձնարարեց ուսուցչական խմբին աւարտել և կտակմելով վերջնականապէս ծրագիրը՝ ներկայացնել Հոգաբարձութեան, որպէսզի կարելի լինի ներքին կանոնադրութեան հետ միասին ներկայացնել պատշաճաւոր իշխանութեան հաստատութեան։

Հոգաբարձութիւնը վերջ տուեց և մի կնճռոտ խնդրի, որ մնացել էր նախորդ Հոգաբարձութեան օրից. դա դպրոցի նախկին տեսուչ պ. լ. Սարգսեանի դպրոցի դէմ յարուցած դրամական պահանջն էր. ինչպէս յայտնի է պ. լ. Սարգսեան, որ ընտրուել էր տեսուչ Մ.-Յովանեան օր. դպրոցի հին Հոգաբարձութեան կողմից և հաստատել այդ պաշտօնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, յետոյ հեռացրուել էր այդ պաշտօնից՝ դիմել էր դատարանին և

պահանջել, որ իրեն բաւարարութիւն տրուի ոռձկի մասին. թէ նահանգական դատարանը և թէ դատարանական պալատը վճռել էին պահանջել Մ.-Յովանեան դպրոցից յօգուտ պ. լ. Սարգսեանի 1210 ր. փոխարէն 1733, որ պահանջում էր պ. լ. Սարգսեան։ Նոր Հոգաբարձութիւնը, խորհրդակցելով իր փաստաբանի հետ, նպատակայարմար գտաւ կասսացիա տալու փոխարէն հաշտութեամբ վերջացնել գործը պ. լ. Սարգսեանի հետ. հաշտութիւնը կայացաւ. Հոգաբարձութիւնը վճարեց պ. լ. Սարգսեանին 1000 ըուբլի և վերջ տուեց գործին։

Մարտի 23-ի, 30-ի և ապրիլի 27-ի նիստերում Հոգ.՝ զբաղուեց դպրոցական քննութիւնների հարցով։ Հոգ.՝ յանձնել էր Մանկավ. ժողովին տալ գրաւորապէս իր պատճառաբանեալ կարծիքը և որոշումը՝ թէ արդէօք հարկաւոր են կատարել քննութիւններ և ինչ տեսակ քննութիւններ՝ աւարտական, թէ դասարանական։ Մանկավ. ժողով առաջ բանաւոր կերպով, պ. տեսչի միջոցով, և ապա գրաւորապէս (արձանագրութեամբ) այն կարծիքն էր յայտնել՝ թէ քննութիւնների որոշման խնդիրը պատկանում է Մանկավ. ժողովի իրաւասութեան և ոչ Հոգաբարձական։ Մակայն Հոգաբարձութիւնը ի նկատի ունենալով, որ Մ.-Յով. դպրոցի հիմնադրի կտակի համաձայն (կտակի՝ որ ծառայում է ներքին կանոնադրութեան տեղ) դպրոցի թէ տնտեսական և թէ ուսումնական գործի պատասխանատվութիւնը դրած է Հոգաբարձութեան վրայ, որի կազմի մէջ գտնվում է և Մանկավ. ժողովի ներկայացուցիչը ի գէմս տեսչի՝ միաձայն որոշեց (բացառութեամբ պ. տեսչի), որ այդ հարցի վերջնական լուծծումը պատկանում է Հոգաբարձութեան իրաւասութեան, և կարգադրեց՝ նշանակել աւարտական քննութիւն միմիայն է. դաս. աշակերտուհիների համար։ Այդ հիման վրայ է. դասարանը տուեց աւարտական քննութիւն։

Յունիսի 1-ի նիստում Հոգաբարձութիւնն զբաղուեց ուսուցչական կազմի և տեսչի խնդրով առաջիկայ 1910-

1911 ուս. տ. համար ի նկատի ունենալով, որ տեսուչ պ. Տ. Ռաշմաճեանը հաստատուած էր տեսչական պաշտօնի մէջ կաթողիկոսական կոնդակով միայն մի տարի ժամանակով և ուսուցչական մարմինը խնդրում էր օր առաջ որոշել և յայտարարել՝ թէ ինչ փոփոխութիւններ պէտք է կատարուեն ուսուցչական կազմի մէջ։ Այդ նիստում Հոգ.՝ ը կայացրեց հետեւեալ որոշումը. ա. ի նկատի ունենալով, որ տեսուչ պ. Տ. Ռաշմաճեանը հաստատուել է իր պաշտօնի մէջ մի տարի ժամանակով, որ ցանկալի և անհաժեշտ է, որ Մ.-Յով. միջնակարգ դպրոցի տեսուչն ունենայ կրթական բարձրագոյն ցենզ, որից զուրկ է պ. Տ. Ռաշմաճեանը, ազատ համարել նրան Մ.-Յով. դպրոցի տեսչական պաշտօնից. բ. նոյնպէս ազատ համարել պաշտօնավարութիւնից դպրոցի ուսուցչական կազմը և 1910-1911 ուս. տ. ուսուցչական խումբը կազմելիս նախապատվութիւն տալ դպրոցում երկար տարիներ ուսուցչական պաշտօն վարած վարդուհիներին և ուսուցիչներին, աչքի առաջ ունենալով անպայման և նրանց ունեցած ուսուցչական ցենզը։

Ապա յունիսի 2-ի նիստում Հոգաբարձութիւնը Մ.-Յով. դպրոցի տեսուչ ընտրեց պ. Ստ. Մալխասեանցին երեք տարի ժամանակամիջոցով։ Հոգաբարձութեան այս որոշումը հաստատուեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Մատթէոս Բ-ի 1910 թ. յունիսի 9-ի արձակած № 1498 կոնդակով։ Ապա Հոգաբարձութիւնը պ. տեսչի մասնակցութեամբ և նրա առաջարկութեամբ կազմեց առաջիկայ 1910-1911 ուս. տ. համար նոր ուսուցչական խումբ, որի մէջ մտան հին կազմի անդամների մեծագոյն մասը. և ուսուցչական մարմինը ստացաւ հետեւեալ վերջնական կազմութիւնը.

1. Աղաջանեան Ա.
2. Բաբասեան Յ.
3. Բագրատունի Ա. աւ. քահ.
4. Բէժանեան Հ. օր.

5. Գիւղալեան Տ.
  6. Դաւթեան Ա. տիկ. (վերակաց.)
  7. Դեմիքեան Գ.
  8. Կանայեան Խ.
  9. Ղարաջեան Ե. օր.
  10. Մալխատեան Արշ.
  11. Մալխասեանց Ստ. (տեսուչ)
  12. Մամիկոնեան Թ. տիկ.
  13. Մելիք-Զանեան Յ.
  14. Մելիք-Օհանջանեան Լ.
  15. Մինասեան Արշ. քահ.
  16. Մնացականեան Շ. օր.
  17. Մուրագեան Կ. օր.
  18. Ցարութիւնեան Իս.
  19. Ցովէփեան Գ.
  20. Շախկամեան Մ. օր.
  21. Շահիկեան Ա. օր. (վերակ.)
  22. Մարգսեան Ն.
  23. Տէր-Գրիգորեան Հ. տիկ.
  24. Տէր-Ցովէփեան Արշ.
  25. Տէրեան Կ.
  26. Տիգրանեան Պ.
-

1 2

00000

մասնակիութեան

00000

ավելացնալու

65 50000 50000 մասնակիութեան

# Դ բ ա լ ա կ ա ն հ ա շ է

Դ Ա Ւ Տ Ք

Վ ա խ ա հ ա

§ 1				
Ուսման թոշակ . . . . .	2300			
§ 2				
Դրամագլխի 0/0/0 . . . . .	3562 50			
§ 3				
Քարվանսարայից եկամուտ . .	22000	—	27862	50
<hr/>				
Փոխադրելի . . . . .	—	—	27862	50

Հ Ա Յ Ո Ւ 1909—1910 Ա. Տ.

Ե Լ Ք

§ 1

ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

1	Ռոճիկ տեսչին . . .	2000	—		
2	» 3 վերակաց. .	1200	—		
3	Մանկավ. Խ. քարտ. .	100	—		
4	Գրադարանապետուհուն	100	—		
5	Դասագին 50 լ. × 3 12.	15100*	—		
6	Գրաւոր. վարձ. 5 × 148	740	—	19240	—
7	Ռոճիկ բժշկին . . .	480	—		
8	» բժ. օգնականին	150	—	630	—
9	» Հոգ. Խոր. քար.	300	—		
10	» հաշուապահին.	600	—	900	—
11	Զեռագործի նիւթեր.	100	—		
12	Գրադարան . . . .	200	—		
13	Ֆիզիքակ. կաբինէտ.	300	—		
14	Դաշնամուր . . . .	414	—		
15	Դեղորակ և բժշկ. օգ.	200	—		
16	Երեկոյթ և հանդէսներ	100	—		
17	Վառելիք և լուսաւորութիւն.	400	—		
18	Զուր.	150	—		
19	Դպրոցի շինութ. ապ.	133 32	—	1997 32	—
	Փոխադրելի . . .	22767 32	—		

\*) Երկու դաս յանձն է առել Հոգաբ. Խորհ. փոխ-նախագահ տիկ. Դարիա Թագէսսեանը ձրիաբար:

Մ Ա Կ Տ Տ

Ե Ա Խ Ա Հ Ա

**Փոխադրուած . . . . .**

— — 2786250

Ա Յ Ա Վ Ա Ր Ա Վ Ա Ր

0002	միջնական պահանձնական	I
1500	բարեկարգ պահանձնական	II
100	առաջնակարգ պահանձնական	III
100	մասնակի պահանձնական	IV
1P100	մասնակի պահանձնական	V
40	առաջնակարգ պահանձնական	VI
420	մասնակի պահանձնական	VII
030	մասնակի պահանձնական	VIII
050	մասնակի պահանձնական	IX
300	մասնակի պահանձնական	X
000	մասնակի պահանձնական	XI
100	պահանձնական պահանձնական	XII
002	մասնակի պահանձնական	XIII
300	մասնակի պահանձնական	XIV
414	մասնակի պահանձնական	XV
002	բարեկարգ պահանձնական	XVI
100	պահանձնական պահանձնական	XVII
100	պահանձնական պահանձնական	XVIII
100	պահանձնական պահանձնական	XIX
050	պահանձնական պահանձնական	XX
287001	պահանձնական պահանձնական	XXI

2670722 մասնակի պահանձնական

**Փոխադրելի . . . . .**

— — 2786250

Հ թ ւ 1909—1910 ուս. ա.

Ե ւ թ

	<b>Փոխադրուած . . .</b>	<b>22767 32</b>		
20	Շինութեան մանր վերանորոգութիւն. . .	100 —		
21	Կահ-կարասիքի վերանորոգութիւն. . .	100 —		
22	Ռոճիկ ծառաներին. . .	1056 —		
23	» դռնապանին . . .	300 —		
24	Անակնկալ ծախս . . .	100 —		
25	Դատարանական ծախս	100 —		
26	Դիւանական ծախս . . .	150 —		
27	Մանր ծախս. . .	100 —	<b>24773 32</b>	— —

§ 2

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

	<b>Կառավարչին եկամտի</b>			
1	5% ը . . . . .	1100 —		
2	Երկու դռնապանին	480 —		
3	Վառելիք և լուսաւորութիւն . . . . .	50 —		
4	Զուր . . . . .	130 —		
5	Շինութեան ապահովագրութիւն . . . . .	413 15		
6	Տուրքեր. . . . .	3100 —		
7	Մանր վերանորոգ. . .	100 —		
8	Աղբ թափող մշակին.	72 —		
9	Մանր ծախս . . . .	50 —	<b>5495 15</b>	— —
	<b>Փոխադրելի</b> . . . .	<b>30268 47</b>		

U. S. S.

*U u h u i u*

ծանօթութիւն.—Դեփիցիտը ենթագրվում է ծածկել կրպա-  
կակալների վրայ մնացած 2315 ր. 72 կ. պարտքից և այլ պար-  
տապահների ստանալիքներից:

2 h i 1909—1910 ուս. տ.

b l f

Փոխադրուած . . .

30268 47

§ 3

**ՆՊԱՍՆԵՐ և ԿԵՆՍԱԹՈՇԱԿ**

1 Թիֆլ. կուս. անապատին . . 300


2 Ախալքալաքի ծխ. դպ. . . . 150

3 Ա. ա. ք. Բագրատունուն

(Կենսաթոշակ) . . . . . 120

570 — 30838 47

— — — 30838 47



A 70513

Ա կ Տ Ի Ւ

Հ Ա Լ Ն Ւ  
առ 1 սեպտեմբ

1	Դրամարկղ						
	մնացորդ ս. թ.	. . . . .		407	71		
2	Շարժական կայք						
	մնացորդ ս. թ.	. . . . .		7169	53		
3	Դասական պիտոյք						
	մնացորդ ս. թ.	. . . . .		2113	26		
4	Կրպակակալների հաշիւ						
	մնացորդ ս. թ.	. . . . .		3398	48		
5	Պարտապանների հաշիւ						
	մնացորդ ս. թ.	. . . . .		4177	50		
6	Անշարժ կայքի հաշիւ						
	մնացորդ ս. թ.	. . . . .		457000	91		
7	4% պետական բենտա						
	մնացորդ ս. թ.	. . . . .	90,000	—	—		
	0% նոյն բենտայից						
	առ 1 սեպտ. 1909 թ.	. . . . .	855	—	90855	—	
8	Թիֆլ. Առևտր. Բ. ընթ. հաշիւ						
	մնացորդ ս. թ.	. . . . .		1197	82		
9	5% օբլիգացիաների հաշիւ						
	մնացորդ ս. թ. 3 օբլիգացիա						
	1000 ր., հաշուած 71—25						
	գնուած կուրսով	. . . . .		2137	50	568457	71
				—	—	568457	71

կ շ հ ն  
բերի 1910 թուի

Q U U H H

1	Կրպակակաների հաշիւ մնացորդ ս. թ. . . . .	108276	—	—
2	Պարտատէրերի հաշիւ մնացորդ ս. թ. . . . .	56517	164793	
3	Դրամագլուխ մնացորդ ս. թ. . . . .		56680978	
				56845771

Մ Ա Խ Տ Ք

Դ Ր Ա Մ Ա Բ Կ Ե Ւ

	Մնացորդ առ 1-ի սեպտ. 1909թ.	—	—	40771
1	Քարվանսարայի կրպակալներից.	2412855		
2	Ուսման թոշակից . . . . .	169735		
3	4 <sup>0</sup> /₀ ըենտայից 0 <sup>0</sup> /₀. . . 3420 —	—	—	
4	Քաղ. Վարկի Ընկ. 3 օր- լիգ. 0 <sup>0</sup> /₀ . . . . .	<u>41 70</u>	346170	
5	Քաղ. Վարկ. Ընկ 5 <sup>0</sup> /₀ 2 օրլ. վա- ճառումից . . . . .	2620	—	
6	Թէֆլ. Առևտը. Բանկի ընթացիկ հաշումից. . . . .	1200	—	
7	Պարտապաններից . . . . .	39499		
8	Զեռագործի իրերի վաճառումից.	31 —	3353359	
				3394130

Հ ր շ ա և ս ա ն ն ւ թ ի ւ և

Ե լ ք

1	Դպրոցի վերաբերեալ ծախսեր .	22273	35			
2	» շինութեան վե- րանորոգ. . . . .	61	19			
3	Շարժական կայք . . . .	474	80			
4	Ապահովագրութիւն . .	129	45			
5	Մանր ծախսեր . . . .	112	51			
6	Դիւանական ծախսեր .	169	08			
7	Դատարանական ծախսեր	67	—			
8	Նպաստներ և կենսաթ.	540	—			
9	Անակնկալ ծախսեր . .	584	99			
10	Աւանսով տրուած գու- մարներ . . . . .	866	85			
11	Թիֆլ. Առևտր. Բ. ընթ. հաշուին . . . . .	1900	—	4911	87	
12	Քարվանսարայի վերա- բերեալ ծախսեր .	2422	52			
13	Քարվանսարայի ապա- հովագրութիւն . .	358	36			
14	Տուբքեր . . . . .	2755	89			
15	Պարտատէրերին . . . .	870	92	6407	69	33592 91
	Մնացորդ առ 1-ի սեպտ. 1910 թ.	—	—	348	39	
		—	—	33941	30	

U N I S P

## Դպրոցական ծախ

1	Ուսմար թոշ. ստացուած է ս. թ. Անց են կացվում ընդհանուր ելեմտից հաշիւը . . .	—	—	145785
2	<u>Դպրոցական և այլ ծախսեր . . .</u>	—	—	2099888
	08 451			
	61 021			
	16 211			
	20 081			
	78 911			
	— 016			
	00 196			
	— 000			
	78 716			
	— 0001			
	— 000			
	25 2245			
	— 000			
	06 268			
	98 6679			
	— 000			
	16 0000			
	28 072			
	— 000			
	06 716			
	— 0001			
	— 000			
	00 0000			
	— 000			
	2245673			

ԱՆԴԻ ՀԱՄԱՐ

Ե Լ Ք

1	Բոնիկ տեսչին . . . . .	1999 92	
2	» վերակացուհիներին . .	1199 88	
3	» Մանկավ. Խոր. քարտ.	99 96	
4	» գրադարանապետություն .	99 96	
5	Դասավճարներ . . . . .	14664 86	
6	Գրաւորների վարձատրութիւն .	721 84	
7	Ոոնիկ բժշկին և օգնականին .	590 —	
8	Դեղորայք և բժշկական օգնութիւն . . . . .	175 65	
9	Վառելիք և լուսաւորութիւն . .	785 88	
10	Զուր . . . . .	145 89	
11	Զեռագործի նիւթեր . . . . .	194 91	
12	Երեկոյթներ և հանդէսներ . .	59 80	
13	Մանր ծախսեր . . . . .	229 04	20967 59
14	Դպրոցի շին. ապահովագրութ . .	129 45	
15	» » մանր վերանորոգ .	28 99	
16	» կահ-կարասիքի վերանորոգութիւն . . . . .	69 70	
17	Ոոնիկ ծառաներին . . . . .	986 —	
18	» դռնապանին . . . . .	275 —	1489 14
		—	22456 73

Մ Ա Խ Տ Ք

Դիւանական ծախ

Անց են կացվում ընդհանուր ել և մտից հաշիւը դիւանական բոլոր ծախսերը . . .	—	—	1255	76
			1255	76

Մ Ա Խ Տ Ք

Նպաստելի եւ կեն

Անց են կացվում ընդհանուր ել և մտից հաշիւը բոլոր նպաստներն ու կենսաթ. . .	—	—	570	—
			570	—

## սերի հաշիր

b l. #

1	Թոճիկ Հոգաբ. Խորհրդի քարտ .	280	—			
2	» հաշուապահին . . . . .	620	—			
3	Դատարանական ծախսեր. . . . .	82	—			
4	Գրասենեկային և այլ ծախսեր .	273	76	1255	76	
		—	—	1255	76	

## սարողակի հաշիր

b l. #

1	Թիֆլիսի կուսանաց անապատին	300	—			
2	Ախալքալաքի ծխ. գպրոցին. . .	150	—			
3	Արսէն ք. Բազմատունուն (կենս.)	120	—	570	—	
		—	—	570	—	

Մ Ա Խ Տ Ք

Անակնկալ մուտքի

1	Վաճառուած 5% օբլիգացիաների կուրսի տարբերութիւնը . . .	197	50	—	—
2	Զանազան անձանց հաշիւներով Անց է կացվում ընդհանուր ել և մտից հաշիւը . . . . .	101	67	299	17
		—	—	4489	09
		—	—	4788	26

Մ Ա Խ Տ Ք

Դրամ և պար

1	4% ըենտ. կտրոն. ստացուած է	3420	—	—	—
2	5% օբլիգացիաների . . . . .	41	70	3461	70
		—	—	3461	70

Եւ ելքի հաշիւ

b l f

1	Դուբա են գրվում ա. գպրոցի նախկին տնտեսա- կան կառավարիչ պ. Տէր-Զա- նեանի պարտքը . . . . .	3361 84		
	բ. Զանազան անձանց վրայ մնացած անյուսալի ապառիկներ	816 43		
2	Միամսուագ նպաստներ . . .	554 99*		
3	Օգնութիւն չքաւոր աշակերտուհ.	25 —		
4	Ճանապարհած. Հոգաբ. ներկայա- ցուցին և. Էջմիածին գնալու .	30 —	4788 26	
		— —	4788 26	

օօօ-ի հաշիւ

b l f

Անց է կացվում ընդհանուր ել և մտից հաշիւ . . . . .	— —	3461 70		
	— —	3461 70		
* ) Այս գումարի մէջ են ուսու- ցիչ Ռ. Մ.-Մուսեանին տրուած. և տիկ. Ս. Դաւթեանին 190 <sup>8/9</sup> ոռձկի մնացորդը . . . . .	324 99	—		
	200 —	—		
	524 99	—		

Մ Ա Խ Տ Ք

Ք Ա Ր Վ Ա Լ Ի Ս Ա

1	Եկամուտ կրպակներից . . . . .			22642	19
				22642	19

Մ Ա Խ Տ Ք

Ընդհանուր եկամուխ

1	Քարվանսարայից ստացուած գուտ արդիւնք . . . . .	17078	57	—	—
2	Դրամագլւխի 0/0 0/0 . . . . .	3461	75	20540	27
	Դեփիցիտ ուսումն. տարում . . . . .	—	—	6773	46*
		—	—	27313	73

*) Այս գում. մէջ են մտնում պ. Տէր-Զանեանի անյուս. պարտքը և զանազան անձանց անյուսալի ապառիկները . . . . .	3361	84		
	816	43		
Ընդամենը . . . . .	4178	27		

*բայի հաշիւ*

b l f

1	Խոճիկ կառավարչին . . . . .	1129	28			
2	» դռնապահներին . . . . .	480	—			
3	Ապահովագրութիւն . . . . .	358	36			
4	Տուբքեր . . . . .	2755	89			
5	Մանր վերանորոգութիւն . . . . .	478	10			
6	Զուր . . . . .	119	95			
7	Վառելիք և լուսաւորութիւն . . . . .	61	08			
8	Աղբ թափողին . . . . .	72	—			
9	Մանր ծախսեր . . . . .	108	96	5563	62	
	Անց է կացվում ընհանուր ել և մտից հաշիւը զուտ մնացորդը . . . . .			17078	57	
				—	22642	19

*եւ ելքի հաշիւ*

b l f

1	Դպրոցական ծախսեր . . . . .	20998	88			
2	Դիւանական » . . . . .	1255	76			
3	Նպաստներ և կենսաթոշակ . . . . .	570	—			
4	Անակնկալ ել և մտի հաշուով . . . . .	4489	09	27313	73	
				—	27313	73

Ա Կ Տ Ի Ւ

Հ Ա Ղ Ն Ւ Ե Կ Հ Ղ Խ Ո Ւ

1	Դրամարկղ						
	մնացորդ ս. թ.	.	.	.	.	348	39
2	Շարժական կայլք						
	մնացորդ ս. թ.	.	.	.	.	7873	17
3	Դասական պիտոյքներ						
	մնացորդ ս. թ.	.	.	.	.	2113	26
4	Կրակակակաների հաշիւ						
	մնացորդ ս. թ.	.	.	.	.	1633	25
5	Աւանսների հաշիւ						
	մնացորդ ս. թ.	.	.	.	.	190	—
6	Անշարժ կայլք						
	մնացորդ ս. թ.						
	ա. քարվանսարա . .	400000	—				
	բ. դպ. շինութիւն . .	50000	—				
	գ. նոր կրակակներ . .	<u>7060</u>	<u>91</u>	457060	91		
7	4 <sub>0</sub> /0 պետական բենտա						
	մնացորդ ս. թ.	.	.	90000	—	—	—
	0 <sub>0</sub> /0 <sub>0</sub> /0 առ 1 սեպտ . .	<u>855</u>	—	90855	-		
8	Թիֆլիսի Առևտը. Բ. ընթ. հաշիւ						
	մնացորդ ս. թ.	.	.	.	.	<u>1897</u>	<u>82</u>
						—	—
						561971	80

առ 1-ի սեպտ. 1910թ.

Պ Ա Ս Ս Ի Ւ

1	Պարտատէրեր մնացորդ ս.թ. . . . .	351	25	—	—
2	Կրպակակաների հաշիւ մնացորդ ս.թ. . . . .	1482	47	—	—
3	Կառավարչի հաշիւ մնացորդ ս.թ. . . . .	86	85	—	—
4	Աւանսների հաշիւ մնացորդ ս.թ. . . . .	14	91	1935	48
5	Դրամագլուխ մնացորդ ս.թ. . . . .	—	—	560036	32

56197180

1909-1910

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Մարիամեան-Յովսանեան օրիորդաց դպրոցը այս երկրորդ ուսումնական տարին է, որ իրբե ՝ “Միջնակարգ դպրոց” ունի եօթն հիմնական դասարան կամ տասն տարռայ դասընթաց:

Անցեալ ուսումնական տարուայ վերջին՝ նախկին Հոգաբարձութեան որշոման համաձայն, III բաժանմունքները (հիմնական և զուգընթաց) փակուեցին, այսինքն՝ աշակերտուհիները փոխադրուեցին | դասարան (IV բաժանմունք) և նոր ընդունելութիւններ չեղան III բաժանման համար:

Այս ձեռվ աստիճանաբար փակուել են նախընթաց տարիներում | և || բաժանմունքները, որպէսզի դպրոցը հսարաւորութիւն ունենայ բարձր դասարաններ պահել:

Սոյն ուսումնական տարում դպրոցն ունէր | դասարանից սկսած մինչև VII, զուգընթացներով միասին ընդամենը տասը դասարան, ուր կային **370** աշակերտուհի:

1909 թ. օգոստոսի 25-ից սկսած ուսուցչական խումբը զբաղուեց վերաբննութիւններով:

Դասարանական պարապմունքները սկսուեցին 1909 թ. սեպտեմբերի 3-ին:

Այս ուսումնական տարում նորեկների ընդունելութիւնը կատարուեց շատ սահմանափակ թուով. բարձր դասարաններում եղած միքանի բաց տեղերի համար խնդրատուններ չեղան. միւսներում էլ ազատ տեղեր չկային: Միայն 1910 թ. յունուարին պատահաբար միքանի տեղեր բացուեցին ||| դասարաններում (հիմ. և զուգ). խնդրատուններից քննութեամբ կարողացան ընդունուել միմիայն երեքը:

# ԱՐՄԵՆԻԱԿԱՆ ԿՈՒՄԱ

Անգայ ուստինական ապօպայ և ուսուցական համբարձութեան գործակից իր գործը և այլ առարկա Թիֆլի գործակիցն առաջարկ այն համամեջից, որ եղան զարտառնեց (պ. պ. Յազդական և Պ. Միամարտին) իրնց խմբով թագավորութեան մասին մասին 25 է. առարկաներն ու պարագաները թափանակ էին համար իրար.

Դ Ա Վ Ա Ռ Ո Ւ Ն Ե Ք	Կ Բ Բ Ա Կ Ա Խ Տ Հ Ը Ն Գ	Առաջնակ առարկաներ	Բարգավարչութեան		Առաջնակ առարկաներ	Առաջնակ առարկաներ	Առաջնակ առարկաներ	
			Առաջնակ առարկաներ	Առաջնակ առարկաներ				
1. Բարգավարչի Արքի ա. քառ.	Խաղանք գր. և Ան իրա. ֆախ. այլ ուժեմ.	Իրա.	10	43	22	1	27	37 33
2. Միամարտ Արքի քառ.	Խելքանք գր. և գիրք. անդամական.	Խելքանք. պատ. իրա. գործակ. և այլ աշխատանք.	12	15	5	-	17	19 11
3. Արքանական Հ. օր.	Խոյսանք գր. իրա. գր. և Թիֆ. պրես-	ուստի. բարդ.	10	14	7	1	7	10 2
4. Դաշտան Ա. պիլլ (միամարտ)	Խոյսանք գր. VI զառ. և առաջարկան ցեղ.	Ն. իրա.	6	-	-	40	5	18 4
5. Արքանական Հանդիպահութեան Վ. պիլ.	Եղանք պինդացար V III զառ.	Բ. իրա. և գիրք. անդամական.	14	22	11	3	9	5 4
6. Զորակ և պիլ.	Թիֆ. պիլառ. և Ժանիկ անդամական.	Խոյսանք իրա. և Թ. պինդացար.	14	35	12	-	4	10 4
7. Ղարան հ. օր.	Լորդ. իր. գր. և Թիֆ. բադ. պրես. գր.	Առաջնակ-մասնակից.	8	3	1	-	19	10 9
8. Մարտին կ. օր.	Խոյսանք գր. միամարտ. գր. VII դ.	Խոյսանք իրա. և մասնակիցներ.	13	15	6	-	7	23 23
9. Շաշուանան Շ. օր.	Խոյսանք երրո. գր. և պինդ. Ա. գ.	Խոյսանք իրա.	14	8	4	8	7	10 9
10. Մաթենան Ա. օր.	Խոյս. VI դ. Սահմ. գր. ու գիրք. ցեղ կ.	Բ. իրա. և մասնակիցներ.	18	19	8	5	9	5 1
11. Բարգավարչ Յ. պիլլ (առաջ մարտար)	Խոյսի ցի. IX զառ.	Բ. պատուին.	2	1	1	-	24	-
12. Մելքոն Ն. օր. (մայիս միջ.)	Ա. Նամեկ պրես. գր. VIII զառ.	Բ. իրա.	-	-	7	43	6	7 3
13. Ֆլո. Գրիգորան Հ. պիլ. (պրես. և միջու)	Բարգավարչ Խ. զառ.	Բ. իրա.	5	2	2	33	3	4 3
14. Ջե. Դանիել Ա. օր.	Բիբին պինդ. Խ. զառ.	Եղանք. անդամակ. և Բ. իրա.	15	13	7	2	10	9 3
15. Մելք. Մարտ Բ. գ.	Խոյս. մել. Ան. նույն. պատ անձի.	Խոյս. միջ. պր. իրա. իրավաչ. և սեղեր.	26	142	34	-	12	9 3
16. Մելքոն Բ.	Ն. ասթի. միջ. գր. Ինչ. օճա. իրավաչ.	Խոյսանք իրա.	16	19	9	18	2	5 2
17. Մելքոն Ա. (մայիս մասի բարդ).	Խոյ. մել. VI զառ.	Ն. իրա.	22	21	6	14	-	17 3
18. Մելք. Կանդաման Լ.	Արքունի անդամական.	Բ. իրա.-քայլան. և Բ. պատուին.	15	27	12	-	14	4 3
19. Մանվան Բ.	Խոյ. մել. և Գոյքի Մարտին անդամական.	Բ. իրա.	10	7	4	-	10	3 2 կանչ.
20. Մալուշեան Հ.	Նու. թիվ. գր. և կրանքի անձա.	Եղանք. պատուին. և Բ. իրա. զայդան.	2	6	1 <sup>1</sup>	22	4	2 1
21. Համամատ Արք.	Ներփա. գր. Ան. նույն. զայդան.	Անդամակիցներ.	23	6	1 <sup>1</sup>	-	-	Առաջ. է-է VII դ. այլ.
22. Գրիգոր Արք.	Կորպ. մել. և Մարտին նույն.	Ն. իրա.-քայլան և զայդանան.	10	4	1	-	8	4 1
23. Թադէոսի Բ.	Խոյ. մել. և կրանքի նույն.	Ն. պատուին. և իրանելին.	13	14	7	-	13	6 2 3
24. Խայտան Ժ. (մայու)	Խոյ. մել. VI զառ. և Խոյ. նույն.	Բայցիս, անդամակիցն և մանկ-փոք.	20	-	-	2	1	5 2
		Բայցիս, անդամակիցն և մանկ-փոք.	6	1	-	17	-	16 3
25. Տիգրան Գ. 16 դաստ.	Խայտան նույն. (Ֆլո. մաս.)	Ալլերա և երկրաչ.	-	8	3	-	4	9 2 կանչ.
26. Ալ. Միքայել (Ալյան) Գ. 16 դաստ.	Գլոբ. մել. և Մարտին անդամական.	Ֆլոբին, բնախ. և սիմֆոն.	-	-	-	-	1	18 գոյն կ.

<sup>1)</sup> Առաջ վայելակից յայց էր ու Թիֆ. Առաջ վայելակից պատասխան ու համար քայլան շնորհած անդամական գործակիցներից մասնակիցների մասին 1910 թ. ձեռք. է-է պատ. (մարտութ. Արց. մաս ու շնորհած գործակիցների մասին)

Աւանդվում էին հետեւեալ առարկանելոր.

Ա. Ռ. Ա. Բ. Կ. Ա. Ն. Ե. Բ.	I դաս.	II դաս.	III դաս.	IV դաս.	V դաս.	VI դաս.	VII դաս.
1 Կրօն . . . . . . . .	2	2	2	—	—	—	—
2 Եկեղեցական պատմութիւն . . . .	—	—	—	1	1	1	—
3 Կրօնների պատմութիւն . . . .	—	—	—	—	—	—	2
4 Հայոց լեզու* . . . . .	6	6	5	5	5	6	5
5 Ռուսաց լեզու* . . . . .	5	5	5	5	4	5	4
6 Ֆրանսերէն . . . . .	—	—	—	2	2	2	2
7 Հայոց պատմութիւն. . . . .	2	2	—	2	2	2	2
8 Հայաստ. աշխարհագրութիւն . . . .	—	—	2	—	—	—	—
9 Ռուսաց պատմութիւն . . . . .	—	—	—	—	2	2	—
10 Ռուսաստ. աշխարհագրութիւն . . . .	—	—	—	—	2	—	—
11 Բնդհ. պատմութիւն . . . . .	—	—	2	2	2	2	2
12 Բնագիտութիւն . . . . .	3	3	3	2	2	2	—
13 Բնդհ. աշխարհագրութիւն . . . .	2	2	2	2	—	—	—
14 Թուաբանութիւն . . . . .	4	4	3	3	—	—	—
15 Սլքերաա . . . . .	—	—	—	2	2	2	2
16 Երկրաչափութիւն. . . . .	—	—	—	—	2	2	2
17 Ֆիզիկա . . . . .	—	—	—	—	2	2	2
18 Տիեզերագրութիւն . . . . .	—	—	—	—	—	—	2
19 Քաղաքանատեսութիւն. . . . .	—	—	—	—	—	—	2
20 Հոգեբանութ. և մանկավարժ. . . .	—	—	—	—	—	—	3
21 Նկարչութիւն . . . . .	2	2	2	—	—	—	—
22 Զեռագործ և ձեռգիտութիւն . . .	2	2	2	2	2	2	—
23 Երգ և երաժշտութիւն . . . . .	2	2	2	—	—	—	—
	30	30	30	30	30	30	30

2 դաս խմբական երգեցողութիւն

\*.) IV դաս. ականած Հ. և Ռ. լեզուների հետ միացած առաջ է տարրւել նոյն լեզուների գըականութիւնը :

Ուսուցչական խումբը անցեալ երկու ուսումնական տարուայ նման պարտադիր ժամերից գուրս շաբաթը մի անգամ իւրաքանչիւր դասարանում ազատ ընթերցանութեան ժամ է ունեցել։ Այս տեսակ դասերը կառավարել են դաստիարակները. դասարանին մատչելի գրքեր են կարդացուել և ենթարկուել վերլուծութեան. գուրս է բերուել գրքի գլխաւոր միտքը, դրանով աշակերտուհիներին միջոց է արուել հետաքրքրուել, ընթերցասիրութիւն առաջ բերել իրենց մէջ և առհասարակ քննաբար վերաբերուել իրենց կարդացածին։ Այս տեսակ ժամերին կարդացուել են նաև այս կամ այն առարկան լրացնող գրքեր։

Ուսուցչական խումբը ամբողջ ուսումնական տարուայ ընթացքում ունեցել է 49 մանկավարժական ժողով։

Այդ նիստերում խօսուել են կրթական-դաստիարակչական, կարգապահական և այլ հերթական խնդիրների մասին։

Արդէն նախկին երկու տարիներում սկսած գպրոցական ուսման ծրագիրը նորից քննութեան առնելով մի շարք նիստերում՝ յարմար դատեց վերամշակել. ուսուցչական խումբը մանկավարժական ժողովներից գուրս սեկցիաների բաժանուելով՝ այդ աշխատանքը կատարեց և գըպրոցին տուեց եօթն հիմնական դասարանի ուսման ծրագիր։

Այս նոր ծրագրով Մանկավարժական ժողովի կողմից կարեոր է դատուել առաջիկայ ուսումնական տարում հետեւալ բարեփոխութիւնները մտցնել.

1) Հայոց պատմովդիւն. — Քաղաքակրթութեան տարերքն, առասպելական շրջանի հետ միասին, համառօտակի և գագաթնակէտերով Հ. պատմութիւն անցնել || դասարանում. | դասարանից վերացնել այդ առարկան։ ||| դաս. անցնել Հայաստ. աշխարհագրութիւն. իսկ |IV դասարանից սկսել քննական Հայոց պատմութիւն և վերջացնել |V դասարանում, պատմութիւնը հասցնելով մինչև նորագոյն շրջանը։

2) Ընդհ. աշխարհագրութիւն. — Այս առարկան վերջացնել ոչ թէ ||| դասարանում, այլ |IV-ում, ուր պիտի անցնեն եւրոպան։

3) Երկրաշափական ծևագիտութիւն. — Երկրաշափութեան և նկարչութեան առարկաներին որպէս նպաստող մաս՝ առաջարկվում է ցածր դասարաններում մացնել երկրաշափական ձևագիտութիւն։ Առաջարկվում է նկարչութիւնը շարունակել նաև բարձր դասարաններում։

4) Փրամնուերէն. — Վեցերորդ դասերից խուսափելու համար անցեալ և այս ուսում. տարրում յատկացրուած էր շաբաթական երկուական դաս։ Լեզու սովորելու համար դասերի այս քանակն անբաւարար գտնելով, առաջարկուեց դարձեալ սկսել Խ-րդ դասարանից և վերջացնել Վլ-ում, սակայն իւրաքանչիւր դասարանում ֆրանսերէնը լինի շաբաթական երեքական դաս։

5) Եկ. պատմութիւն. — Սկսվում է Խ դասարանում և վերջանում Վլ-ում, շաբաթական մի-մի դաս. ցանկալի և կարեոր է համարվում դասերը վերածել երկուականի և աւանդել միմիայն Վ և Վլ դաս., իսկ Խ-ում անցնել քրիստոնէական վարդապետութիւն շաբաթական երկու դասով։

6) Բնագիտութիւն. — Առաջարկվում է Խ դասարանում մի ժամ աւելացնել, փոխանակ երկուսի անել երեք դաս, որպէսզի հնարաւոր լինի մարդակազմութեան-բնախօսութեան հետ միասին անցնել նաև առողջապահութիւն։

### ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Որքան հնարաւորութիւն է եղել, զպրոցն աշխատել է աշակերտուհիներին ճանաչել նոյնպէս իրենց ընտանեկան պայմանների հետ միասին։ Անհրաժեշտ դէպքերում դաստիարակ-դաստիարակչուհիները տներն են գնացել. կազմուել է վիճակագրական տեղեկութիւն, որի պատկերն է հետեւալը.

1) Արհեստաւորի զաւակ 147 աշակերտուհի, 2) առետրականի 61, 3) բանւոր և բանւորուհու (32 կար անող կանայք) 70, 4) գործակատարի 35, 5) ուսուցչի, ուսուցչուհու և այլ պաշտօնեայի 13, 6) հոգեորականի 11, 7) կալուածատիրոջ և գործ. 2, 8) հողագործի 1, 9) անգործի 30։

ՀԱՏ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐՆ ԵՆ

- 1) Թիֆլիսեղի 160, 2) Երևանի նահագից 85, 3) Թիֆլիսի նահ. 60, 4) Տաճկաստանցի (մեծ մասը Թիֆլ. վերաբն.) 20, 5) Պարսկաստանցի (մեծ մասը Թիֆլ. վերաբն.) 13, 6) Գոնձակի նահանգից 8, 7) Ղարաբաղցի 13, 8) Ղարսի շրջանից 4, 9) Սուխումի շրջանից 1, 10) Բաղուկի շրջանից 6:

Աշակերտուհիների յառաջադիմութեան համար դպրոցը պէտք է ունենար առողջապահական ընդհանուր հսկողութիւն և պէտք է օգնութեան հասնէր չըաւոր հիւանդաշակերտուհիներին:

Դպրոցիս բժիշկ պ. Գ. Մաղաքեան շաբաթական երեք անգամ ուսումնարանի փոքրիկ գեղատան մէջ ընդունում էր բժշկութեան կարօտ աշակերտուհիներին. ծանր հիւանդներին այցելութիւն էր տալիս աներում: Ժամանակի սղութեան պատճառով մանրամասն բժշկական քննութեան ենթարկել կարողացել է հազիւ V||, VI և V դասարանները: Դպրոցիս բժ. պ. Գ. Մաղաքեանը իր գեկուցման մէջ ասում էնակ հետեւեալ. «Աշակերտուհիներից շատերը, ինչպէս այդ երեաց աշակերտուհիների ընդհանուր բժշկական քննութեան ժամանակ, ապրում են մութ, շատ անգամ խոնաւ ընակարաններում. զուրկ են կանոնաւոր սննդից, օդից և հագուստից: Այդպիսի պայմաններում զարմանալի էլ չէ, թէ ինչու հիւանդների մի ստուար տոկոսը կազմում է արեան պակասութիւն, ստամոքսի խանգարու մներ ունեցողներ»:

Հիւանդութիւնների տեսակէտից տարին յաջող է անուանում, որովհետեւ թէ քանակով պակաս են եղել և թէ ծանր տարափոխիկ հիւանդութիւններ չեն պատահել. ինչպէս օրինակ, տիֆ, քութէշ, դիֆտերիտ ոչ մի անգամ: Տարուայ վերջին միայն եղան մի քանի հիւանդներ կարմը բուկով և սվինկա-ով: Կային թոքախտաւորներ, որոնցից միքանիսը մեռան, միւսներն էլ բժշկի խորհրդով թողել են առժամանակ ուսումը և բժշկվում են:

Գլխացաւ ու ջղայնութիւն յաճախ է պատահել բարձր դասարաններում. հենց բժշկական ընդհանուր քննութիւնն էլ ցոյց տուեց, որ մեծ աշակերտուհիների մէջ չափից դուրս շատ են ջղայնութիւն ունեցողները, առնուազը  $\frac{1}{3}$ -ը ջղային է:

Աշակերտուհիները անխտիր ձրիաբար էին բժշկական օգնութիւն ստանում դպրոցում. դպրմանուրող չքաւոր աշակերտուհիները դեղն էլ ստանում էին ձրիաբար: Շատերի տնտեսական ու առողջապահական աննպաստ պայմանները անկասկած վատ էին ազդում նրանց յառաջադիմութեան վրայ:

Աշակերտութեան մտաւորին նպաստող գրադարանը թէև այս ուսումնական տարում միքանի գրքով աւելացել է, սակայն ընդհանուր առմամբ շատ աղքատիկ է և աշակերտութեան պահանջին բաւարարութիւն տալ չիկարող: Գրադարանը անցեալ տարի ունէր . . . 1381 կտոր գիրք Այս տարի գնուած են հայերէն 48

” ” ” ” ” ոռուսերէն 71  
Նուէր. . . . . . . հայերէն 7

” ” ” ” ” ոռուսերէն 1  
„Всходы“ ամսագրի յաւելուած 12 . . 139

---

Ընդ ամենը 1520 կտոր գիրք.

Բոլոր դասարաններն իրաւունք ունէին շաբաթական մի անգամ դպրոցի գրադարանից գիրք վերցնել:

1909/1910 ուս. տարում գրադարանից օգտուել են 51 աշակերտուհի, որոնք կարգացել են 225 դ գիրք. միջին թուով իւրաքանչիւրը կարդացել է մօտ 7 գիրք. ամենաքիչը վերցրել են 2, իսկ ամենաշատը 11 գիրք:

1 Դասարանից սկսած մինչեւ III դաս. ամենից շատ են օգտուել. IV—V աստիճանաբար պակասել է. V-ին միջին թուով ընկնումէ 2 գիրք տարեկան: Բարձր դասարանցիները բաւականութիւն չստանալով դպրոցի գրադարանից, գրքեր էին վերցնում ուրիշ գրադարաններից:

Աշակերտուհիները բացակայել են տարուայ ընթացքում միջին թուով 40 դաս կամ 8 օր:

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Однажды в саду я увидел на земле яблоко, и я подумал: «Это яблоко необычайно красиво!»

• 67 •

Այս փոխադրութան ցուցակի համար պիտի ասել  
հետևեալը.

1) | հիմ. դաս. աշակերտուհիները այս ուսում. տարում սովորում էին գրեթէ ||| բաժանման դասընթացը. այս աննօրմալ դասարանը առաջ էր եկել այն հանդամանքից, որ նախկին Հոգաբարձութան որոշման համաձայն երեք տարի յաջորդական կերպով ու աստիճանաբար փակուել էին |, || և ||| բաժանմունքները. դպրոցը չէ ցանկացել ոչոքի գուրս թողնել, դրա համար էլ մնալու արժանի թոյշլերին փոխադրել է յաջորդ դասարան. այսպէս տարիների ընթացքում կազմուել է մի յետ մնացած բաժանմունք. յիշեալ | հիմ. դաս. պիտի կը էր ||| բաժան. անուն, բայց որովհետեւ Հոգաբարձութեան որոշմամբ այդ բաժանմունքը պիտի փակուէր, ուստի և դրան անուանեցինք | հիմ. դասարան յետամնաց. ահա զլիսաւորապէս այս պատճառով սրան կարելի է անուանել աննօրմալ բաժանմունք:

Պարզ է, որ | դաս. հիմ. ամբողջավին փոխադրվում է և տուաջիկայ 1910/11 ուս. տարում կազմում է իսկական կամ նօրմայ | դասար. այժմ սրանց գիտութիւնը ||| բաժանմունքից բարձր է | դասարանից պակաս. Միայն սրանցից վեց ընդունակներին միջոց է տրուած պատրաստուել մի կամ երկու առարկայից (մեծ մասամբ թուաբանութիւնից) և օգոստոսին քննութիւն բռնել || դաս. մանելու համար:

2) ||| դաս. հիմ. վերաքննութեան աւելի մեծ տուկոս է տուել, քան թէ փոխադրութեան. այս դասարանցիները հէնց | ից սկսած միջակ ոյժերով են առաջ դնացել. դա կարելի է բացաբերել նոյն դասարանի աշակերտուհիների սահմանափակ ընդունակութիւններով, ինարկէ խօսքը վերաբերում է մեծամասնութեանը, մինչ դեռ ||| դաս. զուգ. | ից սկսած համեմտաբար ուժեղ քայլերով է առաջ ընթացել, որը հետեանք է սոյն դասարանցիների անհատական առաւելութեան. ուրիշ բացաբութիւն չի կարելի տալ, քանի որ այդ երկու բաժանմունքներում | ից մինչ |||-ը մեծ մասով նոյն դասատուներն են դառաւանդել և նրանք են որ այդ անհատական տարբերութիւնը

նկատել ու շեշտել են: Միևնոյն բանը կարելի է ասել  
Խ գասարան հիմ. և զուգ. համար:

3) Վ գասարանի ամենից քիչ փոխադրութեան տոկոս  
տալը մեծ մասով նոյն գասարանի բազմամարդ լինելու  
հետևանքն է, դեռ լլլ գասարանից 55 հոգի էին. նիւթա-  
կանի սղութեան պատճառով հնարաւոր չեղաւ երկու բա-  
ժանմունքի վերածել. բազմամարդութեան շնորհիւ դժգոհ  
էին այդ գասարանի մտաւոր յառաջադիմութիւնից և  
կարգապահութիւնից. անկասկած աչքի առաջ պէտք է  
ունենալ անհատական սահմանափակ ընդունակութիւննե-  
րը, գարուցից անկախ պատճառով հայոց լեզուի ու մատեմա-  
տիկայի գասատուների փոփոխութիւնը: Այս բոլորն իրենց  
հերթին վատ են ազգել ընդհանրապէս և մասնաւորապէս  
էլ նոյն առարկաների յառաջադիմութեան վրայ:

4) Գալով Վ գասարանին, պիտի ասել, որ սա էլ  
վերաքննութեան աւելի մեծ տոկոս է տուել, քան թէ փո-  
խադրութեան. այս գասարանը 1908/9 ուս. տարում կազ-  
մել է Վ գասարան երկու չորրորդների միաւորութիւնից,  
որոնք իրենց գասարանական յատկութիւններով ու ընդու-  
նակութիւններով նախ՝ միմեանցից տարբեր էին և երկրորդ  
տուին 44—46 հոգուց մի բազմամարդ, գասարան որ մեծ  
արգելք էր յարսւցանում նօրմալ պարապմունքի հանդէպ:  
Միևնոյն ժամանակ, գարձեալ գլուցից անկախ պատճառով,  
հայոց լեզուի ու մատեմատիկայի գասատուների փոփոխու-  
թիւնը իր աննպաստ ազետեցութիւնն ունեցաւ թէ առհա-  
սարակ և թէ մասնաւորապէս նոյն առարկաների վրայ:

Ի՞նչ վերաբերում է փոխադրութեան ընդհանուր տո-  
կոսին, պիտի աչքի առաջ ունենալ այն հանգամանքը, որ  
փորձերի վրայ հիմնուած կարելի է ասել (ինչպէս նախըն-  
թաց տարբների փորձն էլ ցոյց է տուել) թէ վերաքն-  
նութիւններից առնուազն  $\frac{2}{3}$ -ը անցնում, փոխադրվում է,  
այնպէս որ ընդհանուր փոխադրութիւնը միջին թուով  
կլինի  $70^{\circ}/_0$ :

Աշակերտութեան ընդհանուր թուից եղել են

145-ը թոշակատու . . . . .	39,19 <sup>0</sup> / <sub>0</sub>
225-ը ձրիավարժ . . . . .	60,81 <sup>0</sup> / <sub>0</sub>

Դպրոցը ծայրայեղ չքաւուներից միքանիսին միայն տուել է դասագրքեր։

Հոգաբարձութեան ու խմբի միջնորդութեամբ չքաւուներից ութ հոգի ձրիաբար ճաշում էին կ. չ. Բ. Ընկերութեան ճաշարանում, իսկ էժանագին ճաշարանում 6 աշակերտուհի։

Գալով դպրոցի կարգապահական խնդիրներին, պէտք է ասել, որ աստիճանաբար այս երեք տարուայ ընթացքում պակասել են աշակերտական անկարգապահ վերաբերմունքները, այդ պարզօրէն կարելի է տեսնել մանկավարժական ժողովի արձանագրութիւններից. 1907/8 ուս. տարում խումբը շատ նիստեր է նուիրել կարգապահական խնդիրներին, իսկ վերջին երկու տարում աւելի զբաղուել է ուսման ծրագրով և կրթական ընդհանուր խնդիրներով. աշըրի ընկնող անկարգապահնութիւն չի նկատուել աշակերտութեան մէջ։

Սրանով երբէք չի կարելի ասել, թէ ամեն ինչ կատարեալ է. ոչ, դեռ կան պակասութիւններ, թեթև թերութիւններ, որոնք ժամանակի ընթացքում, կրթական ու հետեւղական միջոցներով, կամաց-կամաց աւելի կպակասեն, աւելի կնաեմանան։

Առհասարակ թէ մտաւոր ու բարոյական և թէ գեղարուեստական կրթութեանը մասսամբ աւելի նպաստելու համար կատարուած են հանդէսներ՝ դպրոցական ակտ, նոր տարուայ առթիւ ցերեկոյթ. աշակերտութիւնը մասսա տարուած է Ուսուցչական Միութեան Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպած ցերեկոյթին շաւլաբարի թատրոնում երկու անգամ. ամբողջ աշակերտութիւնը տարուած է սինեմատօգրաֆ՝ յատուկ պատկեների ընտրութեամբ, թոշնաբուծական ցուցահանդէս և ակվարիում։

Զատկի արձակուրդին էլ VII դասարանցիների հետ

կատարուել է մի փոքրիկ էկսկուրսիա դէպի Արմագ ու  
Մցլսէթ վանքերը:

## VII ԴԱՍԱՐԱՆԸ

Այս տարի էլ անցեալ ուսում. տարուայ նման VII-ցի-  
ները լսեցին և տուին փորձնական դասեր: 1909 թ. դեկ-  
տեմբերի 8-ից մինչև ապրիլ 1-ը նրանք լսել են զանազան  
դպրոցներում հետևեալ դասերը.—հ. լեզու 6 դաս, թուաբ.  
5 դաս, ու. լեզու 3 դաս, հ. պատմութիւն 2, մանկա-  
պարաէզում ձեռարուեստ 2 դաս, ձեռագործ 1, աշխարհա-  
գրութիւն 2 դաս (Յովաննեան դպր.), ընդամենը 21 դաս: Շատ  
դասեր լսել են Զգրաշէնի, Քամոյեան, Ս. Գէորգի, Ս.  
Սարգսի, վարժուհիների դպրոցում և օր. Ղուլիջաննեանի  
մանկապարաէզում, քանի որ |—||| բամանմունքներ չկային  
Յովաննեան դպրոցում:

Այնուհետև մարտի 8-ից սկսած մինչև ապրիլի 13-ը  
VII-ցիներն իրենք տուին փորձնական դաս այս կարգով.—

Զգրաշէնի դպրոցի | բաժ. հ. լեզու 4 դաս, թուաբ 3.  
Յովաննեան դպր. | դասարանում հ. լեզու 1 դաս, թուաբ.  
2, ընագիտութիւն 1, հայոց պատմ. 1, ընդհ. աշխ. 1,  
ու. լեզու 3, ընդամենը 17:

Թէ լսած և թէ տուած փորձնական դասերին եղել են  
պաշտօնական քննադատներ. ամբողջ դասարանը մասնակցել  
է քննադատութիւններին. տուած դասերից միայն վեցի  
քննադատութիւնը հնար եղաւ արձանագրել, այնուհետև  
VII-ցիները, սաստիկ ծանրաբեռնուած լինելով, չկարողացան  
այդ աշխատանքները տանել. արձանագրում էին իրենք  
VII-ցիները: Մնացած 11 դասը յատուկ արձանագրութեան  
մատեանում նշանակուեց համառօտակի:

Վերոյիշեալ համապատասխան գործնական մանկա-  
պարժութիւնից VII-ցիների պարապմունքը եղել է այսպէս.  
—լսել են 21 դաս, իրենք տուել են փորձնական դաս 17 և

ունեցել են այդ գասերի նկատմամբ 26 քննադատութիւն, բոլորը միասին 64 դաս. սրանցից 30 դասը կատարուել է պարտավիր ժամերից դուրս:

VII դասարանում կային 24 հոգի, բոլորն էլ աւարտեցին. կարևոր ենք համարում մէջ բերել աւարտողների ազգերը և անունները.

1. Աւետիսեան Մագթաղինէ . . . Նոր-Բայազէտցի
2. Ահարոնեան Աննա . . . . Շուշեցի
3. Գասոյեան Անահիտ . . . . Թիֆլիսեցի
4. Երզնկանեան Հեղինէ . . . . Ախալցխացի
5. Եղիսերեան Արմենուհի . . . . Սուխումի շրջանից
6. Զաքարեան Հեղինէ . . . . Վաղարշապատցի
7. Թարխանեան Սիրանուշ . . . . Վաղարշապատցի
8. Թումանեան Նուարդ . . . . Լոռեցի (Դսեղ գիւղից)
9. Կանայեան Արփենիկ . . . . Իգդիրցի
10. Մկրտչումեան Արբուհի . . . . Թիֆլիսեցի
11. Յարութիւնեան Հայկանուշ . . . . Թիֆլիսեցի
12. Յովհէփեան Մարգարիտ . . . . Սղնախեցի
13. Ներսիսեան Վարսենիկ . . . . Թիֆլիսեցի
14. Նաւասարդեան Հայկանուշ . . . . Երևանցի
15. Շահինեան Սիրանուշ . . . . Կարինեցի
16. Զոլախեան Մարգարիտ . . . . Ագուլիսեցի
17. Պահլաւունի Փեփրոնէ . . . . Իգդիրցի
18. Սահակեան Նունէ . . . . Զալալօղլեցի
19. Սահակեան Փառանձէմ . . . . Լոռեցի
20. Տօնոյեան Արփենիկ . . . . Ղարսեցի
21. Տէրտէրեան Սրբուհի . . . . Գօրեցի
22. Տէր-Խաչատրեան Աշխէն . . . . Ղաղախեցի
23. Տէր-Ղուկասեան Եղիսարէթ . . . . Թիֆլիսեցի
24. Տէր-Ներսիսեան Մարիամ . . . . Ագուլիսեցի


1910 թ. մայիսին էքստերն կերպով քննուողներից  
(ընդամենը երեք) միայն երկուսը կարողացան քննութիւն  
բռնել՝ Բէրբէրեան Կարինէ (Վանեցի), ստացաւ երրորդ  
(III) դասարանի աւարտական վկայական, Կանայեան  
Մարիամ (Իգդիրցի)՝ հինգերորդ (V) դասարանի աւար-  
տական վկայական:



Ի դիմաց Մանկավարժական Ժողովի

Տեսուչ՝ Տ. Ռաշմանձեան


19 Յունիսի 1910 թ.

Թիֆլիս:






ԱՏՈՒԳՎԱԾՄ Ե 1971 թ.



[ 504 ]



A II  
70513